

Հաղորդվող հաճախությամբ
Հեղինակի անունը և փոստային հասցեն
Իրի բաժնի օրհանոցը Գրք.
Անհանգիստ պարսիկ իշխանի 60
Այլ ամսագրեր 35
Սեպտեմբերի բնագրի 85
Այլ ամսագրեր 45
Բոլոր իսկապես պիտի այնտեղ տիր.
90 զրույցներ քաղաքի բնակիչի 80
Հարցազրույց քաղաքի օրհանոցի.
15 կիսօրյա ցուցակ 60 ր. տրք.

ՄԵԶԵՄԻԱԻ

ԱԵՊՈՒՄ

30 րպրա

30 րպրա

مجموعه اخبار
الاولى شهر جمادى الاولى سنة 1318

DIRECTION
DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand Rue de Pera 65

Հաղթանակ միջազգային խառնուրդի իշխան ՅՈՒՆԱՆԵՍԻ ՔՕԼԱՅԵԱՆԻ միջազգային օրհանոցի թվարկումը 65

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՍԸ

ՄԵՌՈՆԵԼԱՍԻՆԵՐՈՒ

1863ի ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Շատերու կողմանէ շատ անգամ
լուծած է թէ ինչ պատճառաւ ե-
կեղեցիք նշնցեալի մը թաղման հան-
դէսը կատարելու համար Բահանայի
գլուխ 100 դահեկան կը պահանջեն
ժողովրդէն, մինչդեռ Մկրտութեան
և Հարսանեաց արարողութիւնները
պաշտելու համար չեն պահանջեր,
մանաւանդ Հարսանեաց համար, որ
աւելի չքեղ և հանդիսաւոր կերպով
կը կատարուի:

Եթէ մէկը աս խնդիրը առանց
ընթացողութեան և ըստ ինքեան
քննելու ըլլայ, յայտնապէս կը տես-
նէ թէ պահանջուած 100 դահեկա-
նը չափազանց է և անիմաստ առա-
ջարկութիւն, և միանգամայն ծանր
տուրք մը դրուած է ժողովրդեան
ամէն դասակարգի համար. սակայն
ընթացք մտածելով և հանդիպած ի-
րողութիւնները լիովին քննելէն վերջը
կը համոզուի և պէտք է որ առանց
հակառակութեան համոզուի, թէ օ-
րինաւոր և բանաւոր պատճառներէ
յառաջ եկած է: Պարզեմք խնդիրը
և դէպքերու նայինք:

Երբ 1863 թուականին, Ս. Յով-
հան Ոսկերեանի եկեղեցւոյ շինու-
թիւնը կ'աւարտէր, հարկը կը պա-
հանջէր այդ ազգային մեծագործ
հաստատութիւնը ազգային մատա-
կարարը առանց բռնել ըլլալու օտար
միջամտութեան և ձեռնտուութեան.
և եկեղեցին զուրկ ըլլալով հաստա-
տուն և անշարժ կալուածներէն, պէտք
էր որ Հասարակութեան մէն մի ան-
դամ հարուստ, աղքատ միաբան սի-
րով և միասիրտ յօժարութեամբ ընդ-
հանուր որոշ և կանոնաւոր միջոցներ
հայթայթել եկեղեցւոյ պիտոյքը հո-
գալու և ապագային հանդիպելիք
պարտքերուն առաջին առեկտու հա-
մար:

Ամեն Հասուն Կարգինայն իր նա-
խագահութեան միջոցին այս կարե-
ւոր և ստիպողական խնդիրը լուծու-
ած մտաւորաբար էր, շատ աղէկ զիտէր
թէ ինչ կը կայանայ. ինչ էր իր
բռնելիք ընթացքը, և ինչ էր ժո-
ղովրդեան պարտականութիւնը նը-
կատմամբ իր նպատակներով կառու-
ցուած եկեղեցեաց և ուրիշ ազգային
հաստատութեանց, զոր օրինակ Աղ-
քատանցի, Հիւսնիքանցի, Դպրոց-
ներու և այլն: Երբ Հասարակութիւնը
իր քսակէն դպրոց մը կը կառու-
ցանէ, աղքատանց մը կը հիմնէ և

եկեղեցի մը կը շինէ, այդ նուիրա-
կան հաստատութիւնները երեսի վը-
րայ չի գործ առնաց դարմանը եւս
մտածելու, ըստ որում այդ հաստա-
տութիւնները առանց եկամտի, ա-
ռանց նպաստի և տուրքի, ինքնին
չեն կրնար մատակարարուիլ, ապա
թէ ոչ միշտ պարտքեր քիչ ժամա-
նակի մէջ իրարու վրայ կը դիպուն
և այդ պարտքային մէջ դարձեալ
Հասարակութիւնը պարտական կը
մնայ իր հիմնած հաստատութիւննե-
րը հոգալ և դիպած պարտքերը
վճարել:

Այս նպատակաւ էր որ Ամեն Հա-
սուն Միւրանաւորն, այր բանիբուն և
փորձառու, Հասարակութեան ոգւոյն
իրազգած, և անոր պարտոց և ի-
րաւանց քաջ տեղեկ, կը ձեռնար-
կէր ընդհանուր ժողով մը կազմել և
կը յայտնէր 1863 թուականին: Բոլոր
Հասարակութիւնը, ըստ հրաւիրանաց
իւր արթուն Հոգւոյն, հարուստ, աղ-
քատ, վաճառական, արուեստաւոր,
ամէն դասակարգէ եկեղեցեացի և
աշխարհական անխտիր կը ժող-
ուին Ս. Յովհան Ոսկերեանի ե-
կեղեցւոյ մէջ, ինչպէս կը վկա-
յեն ժամանակակիցք և ներկայ
դանուած անձինքներէն ոմանք: Հոն
Հասուն Նախագահ ի մէջ այլոց բա-
նիք, կ'ըսէ ժողովականաց. «Ահա ա-
սիկ Աստուծոյ շնորհիւ և Ձեր ամե-
նուն փութաշնորհութեամբ և օգնու-
թեամբ աւարտեցաւ ազգային հոյա-
կապ և փառաւոր եկեղեցին, յանուն
Սրբոյն Յովհաննու Ոսկերեանի: Նոյն-
պէս յարակից ժողովարանը և երգե-
ցիկ մանկանց դպրոցը. սակայն թէ՛
եկեղեցին, թէ՛ ժողովարանը և թէ՛
դպրոցը չունին իրենց եկամուտը, և
ազգը պարտական է, ինչպէս որ հիմ-
նարկութեան և շինութեան համար
կամաւոր հանգանակութեամբ նպաս-
տեց, անանկ այժմ մատակարա-
րութեան համար ալ միջոցներ գտ-
նել: Ժողովականք այս բանաւոր ա-
ռաջարկութիւնը առանց երկարօրէն
խորհրդածելու և քննելու, միաբե-
րան կ'ընդունին և կ'որոշեն ազգո-
վին նպաստ ընել իրենց կարողու-
թեան համեմատ: Սակայն նկատելով
որ Ոսկերեանի եկեղեցիէն ի դատ
կան նաեւ ուրիշ ազգային եկեղեցի-
ներ, որոնք եւս միշտ կարօտ են ազ-
գին նպատակներու, ինչպէս Հալաթիոյ
Յիսուս Փրկիչ Մայր եկեղեցին, Սա-
մաթիոյ Անարատ Յղութիւն և Մի-
շաղիւղի Ս. Լուսաւորիչ եկեղեցիք:

Արդ այս չորս զուտ ազգային եկե-
ղեցեաց մատակարարութեան համար
նպատակներ կ'որոշուին ժողովականաց
հաւանութեամբ, և որովհետեւ նոյն-
պէս այն ժամանակին ինչ ինչ
պարտքային ժամանակին բերմամբ
փոխուած են, սակայն ոգին և սկզբ-
բունքը մնացած է, այսինքն ազգին
եկեղեցիներն մատակարարել ազգին
օգնութեամբ և նպատակներով: Դըպ-
րոցներն այլ և այլ եղանակներով և
չափաւոր թոշակներով կրնան կառա-
վարուիլ: Հիւսնիքանցը իր հաստա-
տուն եկամուտներով և երբեմն ալ
կամաւոր հանգանակութեամբ իր ըն-
թացքը շարունակել, նոյնպէս Գե-
րեղմանցն ալ իրեն սեփական օրի-
նաց համեմատ պահուիլ: Սակայն ե-
կեղեցիներն չունենալով հաստատուն
եկամուտ, չէին կրնար ուրիշ կերպով
մատակարարուիլ: Բայց եթէ որոշ և
յարմար նպատակ մը պահանջելով և
այդ նպատակը դրուած է թաղման
հանդիսից եղանակին վրայ:

Հողերու իշխանութիւնը ազատ է
և կարող յարմար դատած ժամանակ
այս ինչ կամ այն ինչ տեղ ժողովըր-
դապետութիւններ հաստատելի դիւ-

հաւանութեամբ, և որովհետեւ նոյն-
պէս այն ժամանակ, անանկ ալ այժմ
եւս հանդիսութեամբ կը կատար-
ուէին և կը կատարուին, այն պատ-
ճառաւ ալ թաղման ձեւերու համար
կանոն և տուրք կ'որոշուի, որն որ
1863ի Կանոնադրութիւն կը կոչուի.
և այն թուականէն ի վեր ի գործա-
ծութեան է, հետեւաբար ոչ կրնա-
կան, ոչ քաղաքական և ոչ ուրիշ ո՛-
րից մտանաւոր ժողովներու, այլ
մի միայն ընդհանրութեան կը պատ-
կանի ընդհանուր վրայ դրուած և
ընկալեալ տուրք ընդհանրապէս փո-
խել, ոչնչացուիլ և կամ ուրիշ յար-
մարադոյն կարգադրութիւն մը հաս-
տատել և հրատարակել: Ըսել է թէ
թաղման համար 100 դահեկան պա-
հանջը ազգովին ընկալեալ կանոն է
և մի միայն ազգային եկեղեցեաց
համար. և այդ նպատակը ոչ աղքա-
տանցի, ոչ հիւսնիքանցի, ոչ Գե-
րեղմանցն և ոչ ուրիշ ո՛րից
դպրոցի կրնայ յատկանայ. ըստ ո-
րում 1863 թուականին արդէն կար
և կանգուն էր հիւսնիքանց, աղքա-
տանց, դպրոց և ուրիշ ազգային
հաստատութիւններ, որոնց նկատ-
մամբ Կանոնադրութեան մէջ բնաւ
յիշատակութիւն չիկայ և չէր կրնար
ալ ըլլալ. որովհետեւ ժողովականաց
դիտմունքը և որոշողութիւնը մի
միայն իւր կառուցած չորս եկեղեց-
եաց մատակարարութեան վրայ էր,
և այդ 100 դահեկանի նպատակը մի
միայն սոյն եկեղեցեաց պայծառու-
թեան համար դրուած էր:

Այդ Կանոնադրութեան ինչ ինչ
պարտքային ժամանակին բերմամբ
փոխուած են, սակայն ոգին և սկզբ-
բունքը մնացած է, այսինքն ազգին
եկեղեցիներն մատակարարել ազգին
օգնութեամբ և նպատակներով: Դըպ-
րոցներն այլ և այլ եղանակներով և
չափաւոր թոշակներով կրնան կառա-
վարուիլ: Հիւսնիքանցը իր հաստա-
տուն եկամուտներով և երբեմն ալ
կամաւոր հանգանակութեամբ իր ըն-
թացքը շարունակել, նոյնպէս Գե-
րեղմանցն ալ իրեն սեփական օրի-
նաց համեմատ պահուիլ: Սակայն ե-
կեղեցիներն չունենալով հաստատուն
եկամուտ, չէին կրնար ուրիշ կերպով
մատակարարուիլ: Բայց եթէ որոշ և
յարմար նպատակ մը պահանջելով և
այդ նպատակը դրուած է թաղման
հանդիսից եղանակին վրայ:

Հողերու իշխանութիւնը ազատ է
և կարող յարմար դատած ժամանակ
այս ինչ կամ այն ինչ տեղ ժողովըր-
դապետութիւններ հաստատելի դիւ-

րութիւն ժողովրդեան և այդ ժողո-
վըրդապետութիւններ իրենց հողե-
ւոր սահմանէն անդին չեն անցնիր.
նշնցեալ թաղման նկատմամբ ընդ-
հանուր վրայ դրուած նպատակը մի
միայն ազգային չորս եկեղեցեաց հա-
մար որոշուած ըլլալուն, կարելի չէ
ժողովրդապետական մատակարարու-
թեան յատկացնել, մանաւանդ նորա-
հաստատ ժողովրդապետութեանց.
Ենթադրենք թէ Հողերու իշխանու-
թիւնը Բանկալթիի և կամ Ենիշէ-
հիւրի կողմերը որոշեալ յարմար տեղ
մը նոր ժողովրդապետութիւն հաս-
տատել, այդ ժողովրդապետութիւնը
իր սահմանին մէջ իր պաշտօնին հա-
մեմատ Մկրտութեան, Հարսանեաց և
Թաղման արարողութիւններ և ուրիշ
հողերու պարտաւորութիւններն կա-
տարելու իրաւունք կ'ստանայ և այդ-
դիտի ծառայութեանց և աշխատու-
թեանց փոխարէն Հասարակութեան
կողմանէ կամովին տրուած նպաստ-
ները կ'ընդունի, սակայն Թաղման
հանդէս մը կատարելու համար ըստ
վերոյիշեալ Կանոնադրութեան որոշ-
ուած 100 դահեկանը չի կրնար իւ-
րացնել, քանի որ այդ որոշ դուժա-
րը ազգին կողմանէ կառուցեալ ե-
կեղեցեաց մատակարարութեան միայն
յատկացած է. ապա թէ ոչ այն կող-
մերու բնակիչք իրաւունք կ'ունենան
1863 թուականէ առաջ ի դորձ դըր-
ուած միջոցներով և ձեւերով իրենց
նշնցեալներն վերցնել առանց 100
դահեկան վճարելու: Եւ եթէ ի ժա-
մանակին Բանկալթիի կամ Ենիշէ-
հիւրի և կամ Թալաթիայի կողմերը
ազգային եկեղեցի մը կառուցուի,
ազգը և հասարակութիւնը կարող է
սոյն եկեղեցւոյն մատակարարութեան
և պահպանութեան համար իր չընթա-
կայից մէջ հանդիպելիք նշնցեալ
թաղման առթիւ որոշուած 100 դա-
հեկանի նպատակը, սոյն եկեղեցւոյ
յատկացնել:

Նոյնպէս եթէ Հասարակութիւնը
ընդունի այժմեան Ս. Յովհան Ոսկե-
րեանցի չընթալան մէջ հաստատու-
ելիք և կամ հաստատուած ժողո-
վըրդապետութեան յատկացնելուն
նշնցեալներէն քանձուած կամ դան-
ձուելիք 100 դահեկանի նպատակը,
նոյն սահմանի մէջ բնակող և գտ-
նուած անձինք ազատ կը մնան այդ
100 դահեկանի նպատակը վճարելէ և
1863է առաջ դորձածուած եղանա-
կին կը դառնան: Ըսել է թէ ազգին
ընդհանրութիւնը իր չորս եկեղեց-
եաց պահպանութեան համար որոշ
և բացայայտ կանոն դրած է. այդ
կանոնը մինչեւ հիմայ ի գործածու-

Այսչափս առ այժմ բաւական հա-
մարելով Կանոնադրութեան այս մա-
սին վրայ խօսել, ի լինել առթիւ և ի
ծաղել զժողովութեանց պատրաստ
ենք աւելի իմն տեղեկութիւն տալ:
ՔՆՆԱԴԱՏ

—Եւ արեւա դարբնէ՛լ արեւընն պոռունն
տուղու մահէլ քէ, Պրիսիթիոն զէմանըն
տան դարմա օարաք, պունտան ի քի մէն
էլ լիլ լի պուռնմիջ օրան գատիմ իրի հա-
մանըն թամիւնմիջ պու տէ ֆա արիթմ
պուռնա թէ, իւտիլ քիւշաք տա ի ինճա
թալմիշ տիր Շէօլէ քի տիւն սապահ իս-
զիէն ի իսասալ Շահանէ հազըրը Սազըզ
Յովհաննէս էֆ, հաղէթիլ լիլ լի նէլ արիթի
միւշարիլ ի հանըն էրքանը մէմուրիյնի, պս
լիւտտէի սէնիէ մահէլ ի մէջ քիւրէ կիտէնէ
Քարպապալար քէ սիմիշ, տուտաք օրունմիշ
լի միւշարիլ ի Յովհաննէս էֆ, հաղէթի

